

որոնք միացած սրբազան զօդով մը՝ զոր-
 ծեցին և կը զործեն ազդեցութիւն մը այն-
 քան ընդարձակ և այնքան յարատե՛ մարդ-
 կային գործունէութեան ամէն խաւերու
 մէջ թափանցելու աստիճան, իստակա-
 նացնելով միանգամայն ամենաբարձր գա-

ղափարներով այն հասարակին՝ որ չի վա-
 խեր երբեք ցնցումէ, չի գիտեր պարս-
 տութիւն և ոչ արեւմուտք, այլ կը նանա-
 պարհորդէ զարբերու հոսանքին մէջէն,
 սփռելու համար ժամանակի մէջ յարտե-
 նական լոյսը:

Հ. Խ. ՎԻՍՏԱՆԵՍԵԱՆ

ՄԻԼԱՆՈՒ ՄԻՒԹԱՐԵԱՆ ՈՐԲԱՆՈՑ-ՎԱՐԺԱՐԱՆԸ

ՅՈՒԼԻՍԻՍ սկիզբը՝ Հաստատութիւնս
 իր զարոցական վեցերորդ՝ տարեշրջանը,
 իսկ Միւլան հաստատուելուն երրորդ տա-
 րեշրջանը կը լրացնէր: Անցած այս տա-
 րեշրջանիս մէջ (1925-26) Հաստատու-
 թիւնս ունեցաւ 60—ի չափ մնայուն որբ
 ասինք, որոնցմէ 40 հատը ներքին ուսա-
 նողներ էին, այսինքն որբանոցին մէջ կա-
 նոնաւոր դասընթացը ընող որբեր, իսկ
 մնացածները դուրսը քաղաքին մէջ գա-
 նազան հաստատութիւններ և կամ ար-
 հեստանոցներ կը յաճախէին:

Կարող ենք ըսել, որ երեք ուրոյն տար-
 րեր ունեցանք որբանոցիս մէջ. Ներքին
 ուսանողներ, Արտաքին ուսանողներ և Ար-
 հեստատուներ: Կարելի չէ ճշդել ասոնց
 մասնակի թիւերը, որովհետեւ տարուան
 ընթացքին երբեմն աւելցան երբեմն պակ-
 սեցան:


1926ի յունուարին մէջ Տեսչութիւնը
 կը փոխուէր. սկսուած կրթական գործու-
 նէութիւնը անդադրում շարունակուեցաւ,
 Որբանոցիս վարչութիւնը յատկապէս աշ-
 խատեցաւ արհեստաւոր տղոց դիրքը բար-
 տըցելու՝ լաւագոյն գործատուններուն մէջ
 զանոնք տեղադրելով, և մասնագիտական
 արհեստանոցներու մօտ դիմուձեք կատա-
 րելով անոնց զարգացումին համար: Այս
 տարի հինգ շրջանաւարտ աշակերտ ունե-
 ցանք մասնագիտական ճիւղի մէջ. երեք
 հոգի՝ Թումանան, կէօչէրեան և Գասպա-
 րեան պատանիք յաջողութեամբ ստացան
 Շերամաքոմոսրեան և յատուկ մեքենագի-
 տութեան վկայականը. Պաղտասարեան,
 Քեհանեան նոյնպէս զովեստով ստացան
 կերպասայինորեան և յատուկ մեքենագի-
 տութեան վկայականը. ասոնց ընկերներէն
 մէկ հոգի ընթացքը զարգեցուց ֆիզիքա-

1. Միւիթարեան Միւթարութեան համար այս Որբա-
 նոցը իր գոյութիւնն ունեցած է 1920ի նոյեմբերէն
 սկսեալ, երբ Պուլսոյ ՔՆԵՎԿԵ. Նուիրակ Մոնօխեոբ
 Տուլէի, յանձն Քենեղիկոսո ժե՛ Սրբազան Պապին,
 այս թուականէն ճիշդ ասի մ'ասալ ճայ որբերու հա-
 մար բացած որբանոցին վարչութիւնը կը յանձնէր Միւի-
 թարեան Հայրերու: Հազեւ ասիք մ'անցած, Եւմիլի Ե-
 դեմէն ետք, որբանոցը իրաւելիս փոխադրուեցաւ, Ալե-
 նակոյ մօտ Ֆիլէսոյ Ե՛ Արդիոյ կողմած զիւրը, և
 անկէ ալ Միւլան, որ աղքատ անկի զիւրաւ պիտի կա-
 բնային արեւտի ու գործի հետեւել. Պուլսէն փոխա-

դրուած այս որբերու թուոյն՝ եկան անհնաւու վերջին
 անգամ Յունաստանէն փոխադրուած որբեր, որոնք նա-
 խորզներուն մէկ մասն են ա միասին հաստատուեցան
 ներկայ Որբանոցին մէջ՝ Ախալէ Ումպրիս պողոտային
 վրայ: Ուրեմ ներկայ Որբանոցո շարունակութիւնն է վեց
 ասի ասալ Պուլս ճիմուած «Քենեղիկոսո ժե՛» ճայ
 որբանոցին, և ոչ թէ Ռուսաստանէն բերուած 10-12 պա-
 սաններու համար բացուած որբանոցի մը, ինչպէս որ
 ժամանակին՝ Իրիտղը կ'անդրակէր Նոր Լուրի մէջ: Ռու-
 սաստանէն հասած այդ որբերը զրեթէ ամբողջութեամբ
 վեճեակի Մ. Ռ. Վարժարան փոխադրուած էին:

կան սկարութեան պատճառաւ: Երեք հոգի յանախեցին Քարտինալ Ֆէրրարիի արհեստական վարժարանը. 10 հոգի քաղաքիս զանազան հաստատութիւններուն և արհեստանոցներուն մէջ հետեւեցան զինկոկրաֆիլի, փորագրութեան, քանդակագոր-

զիքական կազմը նկատողութեան առնելով՝ ստիպուեցանք անոնց գործերուն տեսակը փոխել, ինչ որ մեր առջևը հանեց բաւական խոշոր խոչընդոտներ՝ ներկայիս տիրող գործի տագնապին համար, և այս դժուարութիւնը հարձեւու գործին մէջ՝



Միլիթարեան Բարձրագոյմ Ուսանողարան ի Միլամ

ծորեան, զեղարուեստական կաշեգործութեան, մեքենագիտութեան, կոշկակարութեան և երաժշտական գործիներու շինութեան: Այս արհեստաւոր սաներէն 4 հոգի զիշերային դասախօսութեանց կ'երթային՝ Պրէնս Գեղարուեստից Ակադէմիայի գծագրութեան բաժնին՝:

Երբեմն՝ պարագաններու անյարմարութեան համար, և կամ տղոցմէ ոմանց Ֆի-

ազնուօրէն և եռանդուն հոգւովը Տեսչութեանս աջակցեցաւ Հաստատութեանս իտալացի սկաուտապետը Պ. Բրի՛ոյ:

Գալով ներքին ուսանողներու՝ անոնց չորս դասարան կը ձևացնէին, մէկը նախակրթարանի և երեքը կրթարանի. այս չորս դասարանները օրական 5-6 ժամ դասի պահեր ունենալով զպրոցական կանոնաւոր դասընթացը ըրին Որբանոցիս

1. Արհեստաւոր տղաց իրենց շարքականները կը բերեն ամէն շաբաթ օր և Տեսչութեան կը յանձնեն, իւրաքանչիւր որբ ունի ինչոքական անուկի իր անօրբ, որուն մէջ պարբերաբար կ'անցնին օտարուած շարք-

թականները. և այս գրամէն կը յատկացուի իւրաքանչիւրին պէտք եղած զգեստեղէնի և երթևեկի անհատական ձախը միայն:

ուսումնական ծրագրին համեմատու Արտաքին շորս ուսուցիչներ ունեցանք՝ Թուարանութեան, Ուսուցութեան, Հաշուակալութեան, Բնական պատմութեան, Գծագրութեան և Իտալերէն լեզուի. հինգ ներքին ուսուցիչներ՝ Հայերէն, Յրանսերէն, Անգլիերէն լեզուներու, Պատմութեան, Աշխարհագրութեան և Կրօնագիտութեան համար:

Սկստուածքները Պոլսէն սկսեալ միշտ գոյութիւն ունեցած է Մխիթարեան Որբանոցին մէջ, և ասով մեր նպատակն եղած է սոցոց սրտերուն և զգացումներուն մէջ միշտ վատ պահել և զօրացնել կարգապահութեան հոգին և նկարագրի կորով: Տղոց մտաւորական զարգացման հետ միասին՝ իրենց ֆիզիքականին ձեւար ևս անհրաժեշտ եղած միջոցները համը առնուած էին: Որբանոցիս օգտաւն շրջապատին մէջ շինուեցաւ ընդարձակ մարզարանը: Շուէտական մարզանքը՝ որուն սիրայօժար ձեռնարկեցին մեր Մ. Ռ. Վարժարանի նախկին սաներէն Պ. Հանրի Թահթանեան և Պ. Վարդան Ճիվանեան՝ ստիպողական էր որբանոցիս բոլոր սաներուն: Ներկայ մարզարանը օժտուած է մարմնակրթանքի անհրաժեշտ բոլոր արդի գործիքներով: Այս տեսակէտով ևս շարձեալ երախտապարտ կը զգանք ինքզինքնիս իտալիոյ կառավարութեան, որ Որբանոցիս հայթայթեց մարզանքի զանազան գործիքներ:

Մեր սաներուն ամենէն աւելի հաճելի զբօսանքն եղած էր սկստուտական արշաւանքները՝ առանձին և կամ իտալացի սկաուտ խումբերու հետ, որոնք ամէն առթիւ և ամէն տեղ խանդավառ ընդունելութիւն կ'ընեն, և եղբայրական անկեղծ զգացումներով կը վերաբերուին իրենց հայ եղբայրներուն հանդէպ, ինչպէս որ սովորութիւն ըրած են այսպէս ըսելու: Տարուան ընթացքին Հաստատութիւնս կազմակերպեց նաև Թատրոսական գեղեցիկ ներկայացումներ՝ մասնակցութեամբ Մ. Ռ. Վարժարանի Համալսարանական Ուսանող Սաներուն, որոնք շատ մ'առիթներու մէջ

ցոյց տուին ու կու տան իրենց եռանդուն աշակցութիւնը, բարեացակամ հոգին՝ հանդէպ իրենց որբ եղբայրներուն: Հայ որբերուն կողմէն սարքուած հանդէսներուն՝ Միլանի հայ գաղութը միշտ հաճոյքով ներկայ գտնուած է:

Առիթն է երախտապարտ զգացումներով յիշելու հոս՝ քաղաքիս Վեստփայլ Միլանաւոր Արքեպօս. Դոգիի մեր որբերուն հանդէպ ցոյց տուած զուրկ ու հայրական զորովը: Ան միշտ համակրանօք ու հաճութեամբ ընդունած է Հաստատութեանս դիմումները և անպակաս ըրած է իր ազդեցիկ աշակցութիւնը զանազան առիթներու մէջ: Շնորհիւ Միլանաւորիս՝ կարողացանք այս տարի մեր որբերը օգափոխութեան տանիլ Մանտոնիին վիպական լճեզերեայ քաղաքը Լեզքոյ, ուր անոնք սիրով հիւընկալուեցան տեղւոյս Ազգերանդը Վոլթա արքեպիսկոպոսական վարժարանին մէջ, վայելելով օգափոխութեան յարմար ամէն հանգստութիւն ու դիւրութիւն. ասանուած օր՝ լեռներու, բլուրներու ու լճին վրայ հաճելի պտոյտներ ունեցան, ստէպ բաղնիք ըրին աւազուտ լճեզերքին վրայ, և իրենց արձակուրդի այս սակաւամթիւ օրերը մեծ ուրախութեամբ անցուցին:

Յուլիս 15ին, տարեկան քննութիւնները աւարտելէն հտըը, անոնց արդիւնքէն զատելով, Տեսչութիւնս—համաձայն վենետիկ Մ. Ռ. Վարժարանի Տեսչութեան հետ—վենետիկ անցուց իր որբ սաներէն երկու հոգի, հոն շարունակելու համար իրենց ուսումըը, ինչպէս որ եղած էր նաև նախորդ տարիներու ընթացքին:

ՆՈՒՒՐԱՏՈՒՆԵՐ

Տարուանս ընթացքին զանազան անձինք, իտալացի թէ ազգային, այլևայլ առիթներու մէջ ցոյց տուին իրենց համակերպուն զգացումը հանդէպ Որբանոց—վարժարանիս, զրամական և այլ նուէրով յիշեցով մեր որբերը: Նոր տարիի առթիւ Մ. Ռ. ուսանողները՝ իրենց սարքած հան-

դէսով՝ կազանդի նուէրներ բաժնեցին բոլոր որբերուն: Զատիկ տօնին առթիւ Միւլանու գաղութի մեր ազգայիններէն մին, սղոց նուիրեց զատկական հասկիթ և աւուշեղէն: Քաղաքիս իտալ. Արքայական վարժարանի աշակերտուհիներէն չորս հայ օրիորդներ, Ալեանաքեան քոյրեր, որոնք միշտ ազնուական զգացում ունին օգնելու հայ որբին, իրենց մէկ ձեռագործը

մատան փոխ Տեսուչը Պ. Ռիքալտոնէ » 200 —
 Կաթոլիկ համալսարանի փոխտեսուչը » 80 —
 Պ. Խ. Սիւրմէլեան » 200 —
 Ազնուասիրտ ազգայիններէն եղան անձինք՝ որոնք շատ մ'առիթներուն մէջ իրենց բարոյական աշակցութիւնը չզլացան որբանոցիս, ինչպէս ՏՅԹ. Մ. Խանպէ-



Մուտք բարձր. Ուսամողարամի

Հաստատութեանս մէջ սարքուած հանդիսի մը առթիւ վիճակահանութեան զնելով ի նպաստ իրենց որբ եղբայրներուն՝ հաւաքեցին L. 257 —
 Ազգային եկեղեցական մը որ չուզեց յայտնել անունը . . . » 100 —
 Նոյնպէս ուրիշ անձ մը՝ ազգային » 100 —
 Որբերուն համակիր մը ազգային » 500 —
 Բրոֆ. Տորթ. Արսլան . . . » 150 —
 Օր. Նուարդ Զոհրապեան . . » 100 —
 Ֆրանսական Առևտր. դրա-

կեան և ՏՅԹ. Ֆելչիքէնեան, որոնք զանազան առիթներու մէջ յօժարակամ խնամեցին որբանոցին մէջ պատահած մի քանի հիւանդները, Տեսուչիւնս իբր խորին շնորհակալութիւնը կը յայտնէ ամենուն, որոնք նիւթապէս ու բարոյապէս աշակցած են և իրենց համակրութիւնը ապացուցած են հանդէպ Միթիթարեան Որբանոցիս:

**

Միւլանու Միթիթարեան Որբանոց վար.

ժարանին նոր տարեջրջանը վերսկսան հոկտ. Եին: Միխիթարեան Միարանու-թիւնը՝ միշտ ու հաստատ նպատակ ունե-նայով իր վարժարաններու սաներուն, համալսարանականներուն, և մանաւանդ ներկայիս իր խնամոց ու հոգածութեան ներքե կոնուոզ որբերուն ներկայ կացու-թեան ընկերային պահանջին համեմատ բարձր դաստիարակութիւն ու կրթութիւն մը տալու, և խորապէս զգալով այս պա-տանիները լաւագոյն ապագայի մը համար պատրաստելու անհրաժեշտութիւնը, հիմ-նական փոփոխութեան ձեռնարկեց Մի-լանու նոր հաստատութեան մէջ, առանց երբեք վարանելու հանդիպելիք զժուարու-թեանց ու անհրաժեշտ զոհողութեան առ-ջև, և այդ շէնքը յատկացուց հայ երի-տասարդներու Ուսանողարանի:

Տարիներ առաջ արդէն պէտքը տես-նուած ու մտովին ծրագրուած էր կարեւոր կեդրոնի մը մէջ հաստատութիւն մ'ունե-նալ և հոն հաւաքել Մուրատ Ռ. Վար-ժարանին մեր համալսարանական ուսա-նողները, որպէս զի անոնք սպրուստի ու բնակութեան և այլևայլ պարագաներու տագնապէն ու մտահոգութենէն բոլորովին ազատ, և քաղաքի քրդովիշ մթնոլորտէն թիչ շատ հեռու՝ կարենան մի միայն իրենց ապագայի գործին փաբիլ և այդ նպա-տակին ծառայել: Տիրոզ զժուարին կա-ցութիւնը և ներկայ յարմար առիթն ստի-պեցին վճռական քայլն առնել հիմնովին նոր ծրագրով նոր տարեջրջան մը սկսելու այս ուղղութեամբ:

Վերակազմուած հաստատութիւնս՝ Ռեն-սիոնս՝ Ուսանողարան է Մ. Ռ. Վարժա-րանի շրջանաւարտ համալսարականներու, արհեստի և արուեստի հետեւիլ ուզող մեր բոլոր սաներուն, որով ան նկատուած է նաև Մ. Ռ. Վարժարանի թրքիք ար-հեստներու մի առանձին ժամանակը:

Ասով մեր նպատակը եղած է՝ մէկտեղ հաւաքել մեր վարժարաններուն մէջ դաս-տիարակուող այս երկու տարբերը, և մեր խնամոց հսկողութեան ներքե պատրաս-տել ազգին և ընկերութեան օգտակար սի-

պար անհատներ: Մրազբիս գործադրու-թիւնն սկսելու կարեւոր կէտերէն մին էր՝ նախ Որբանոցին մէջ գտնուող պատանի-ներուն վիճակը ապահովել. այս նպատա-կաւ Միարանութիւնը յարմար դատեց ուս-ման կարող սաները վննետիկ փոխադրել. և հոկտեմբեր 14ին՝ Միլանէն Վենետիկ Մուրատ-Ռաֆ. Վարժարան տարուեցան 11 որբեր, որոնք բարձրագոյն ուսումը հոն պիտի շարունակեն: Մնացած որբերը՝ ըստ կարգադրութեան տեղւոյն տեսչու-թեան՝ արձանագրուեցան Միլանի արհես-տի վարժարաններուն մէջ, ուր պիտի կարենան սովորիլ թէ՛ ուսումն և թէ՛ ար-հեստ: Այդ հաստատութեանց մէջ մեր տղաքը ցերեկօթիկ են. խմբովին առուուն կ'երթան ու երեկոյ կը վերադառնան՝ միշտ Տեսչութեան հոկողութեան ներքև: Ասոնցմէ 12 հոգի կը յաճախեն քաղաքիս լաւագոյն հաստատութիւնները *Manila-ria* կոչուած բարեգործական ընդարձակ արհեստանոցը, ուր կը վայելին խնամք ու համակրանք, և ուր մեր որբերը պիտի կարենան սովորիլ մեքենագիտութեան զա-նազան ճիւղեր, ժամացուցագործութիւն, դերձակութիւն, զարբնութեան գեղարուես-տական զանազան գործեր, հիւանդութիւն, ատաղձագործութիւն, երենագործութիւն, ելեկարագիտութիւն, փորագրութիւն, քան-դակագործութիւն, զբաշարութիւն, կազ-մարարութիւն, ռսկերչութիւն:

Երեք պատանիք կ'երթեկեն *Artigianelli* կոչուած արհեստանոցը՝ կօշկա-կարութիւն, հիւանդութիւն և դերձակութիւն սովորելու համար: Այս հաստատութեանց մէջ մեր տղաքը առաւօտէ մինչև կէսօր կանոնաւոր դասախօսութիւն պիտի ունե-նան. կէսօրէն վերջ՝ գործնական ու փոր-ձառական աշխատութիւն: Անցեալ տա-րուան արդիւնքէն քաջալերուած, մեծ որ-բերէն շնորհ հոգի կերպասաշինութեան վարժարան կը յաճախեն, և մի քանիներ՝ *Opera Cardinal Ferrari* վարժարանի ելեկարական բաժնին: Միջոցներ ձեռք առնելով Տեսչութիւնը կը ջանայ աշխա-տանոցներու, գործատուներու ծանր և

ծառայական գործերէն ցաշիլ բոլոր որ-
բերը և դնել այնպիսի վիճակի մէջ, որով
անոնց ապագային՝ արհեստի վկայականով
կարենան լաւագոյն դիրքեր գրաւել ար-
հեստագէտի առաւելութեամբը:

բին ու մարտին սկիզբը՝ երկու ճնշմամբ
վճարելու պայմանաւ. մուտքի ատեն ու-
սանողը իբր աւանդ պէտք է յանձնէ բա-
ցէն 1000 (հազար) իտալ. լիր:

Ներկայ Հաստատութեան Յայտագիրն



Ազօթարամ Բարձր. Ուսանողարանի

Հաստատութեան մէջ ձրիարար կ'ըն-
դունուին մի միայն Միսիթարեան վար-
ժարաններու աշակերտներէն անոնք՝ որոնց
ընդունելութիւնը կ'որոշուի Միարանու-
թեան վարչութեան կողմէն. զուրսէն ա-
ռաջարկուած երիտասարդներու տարեկան
թոշակն է 4500 իտալ. լիր, հոկտեմբե-

ու Կանոնագիրը արդէն հրատարակուած
է. մանրամասն տեղեկութեան փափագող-
ներ կարող են ուղղակի դիմել Միսիթարեան
Միարանութեան հասցէին, և կամ Մի-
լանի Տեսչութեան հասցէին (Viale Um-
bria, 62, Collegio Armeno - Milano).

Ն. Յ. ԲՈՍՏՐԵՐԻԱՆ

